Հավելված
ՀՀ վարչապետի 2010 թ.
հոկտեմբերի 11-ի N 835 - Ն
որոշման

# Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՁԿԱՆ, ՁԿՆԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՋՐԱՅԻՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը | Պատասխանատու պետական կառավարման մարմինը | Արդյունքը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Ձկան, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող այլ արտադրանքի՝ Եվրամիություն արտահանման համար օրենսդրական դաշտի մշակում | 2010 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | ձկան, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող մթերքի մնացորդային մոնիթորինգային պլանի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման ընդունում |
| 2. | Ձկնաբուծության ոլորտում մակաբուծային հիվանդությունների գնահատում և հաշվետվություններ ներկայացնելը | 2010 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | բնագավառում կոմպետենտ փորձագիտական խմբի ձևավորում և մակաբուծային հիվանդությունների վերացման ռազմավարական պլանի մշակում՝ համաձայն Եվրամիության չափորոշիչների |
| 3. | Ձկների, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող այլ արտադրանքի փորձաքննություն մանրէային և վիրուսային հիվանդությունների նկատմամբ, այդ թվում՝ սալմոնելա և աղիքային խմբի մանրէները, մասնավորապես, E-coli 0157:H7 տարատեսակը, և հիվանդությունների մասին հաշվետվություններ ներկայացնելը | 2010 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | համապատասխան կարողություններով լաբորատորիաների ընտրություն և հաշվետվություններ ներկայացնելը |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 4. | Չկան, ձկնամթերքի առաջնային մշակման և վերամշակման արտադրամասերում միջազգային չափորոշիչներին համապատասխանող արտադրական (GMP) կամ պատշաճ հիգիենիկ փորձի (GHP) ներդրման սկզբունքների մշակում | 2010 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | համապատասխան տեխնիկական ուղեցույցի մշակում և միջազգային չափորոշիչներին համապատասխանող վերամշակման արտադրամասի ձևավորման համար պահանջվող բյուջեի հաշվարկում |
| 5. | Չկան և ձկնամթերքի արտադրությունում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման ծրագրի մշակում և ներդրումից բխող հաշվետվություններ ներկայացնելը | 2010 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | ներդրման ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը սահմանող՝ ՀՀ կառավարության որոշման ընդունում |
| 6. | Սննդամթերքում մնացորդային նյութերի լաբորատոր հսկողություն իրականացնող լաբորատորիաների ցանցի ձևավորում և միջազգային հավատարմագրման պլանի մշակում | 2010 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | միջազգային փորձագետների կողմից ընտրված երկու լաբորատորիայի «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձաքննության կենտրոն» և «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ների միջազգային հավատարմագրման գործընթացի ծրագրի մշակում<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ որպես ազգային երաշխավորված լաբորատորիա, ճանաչման և միջազգային հավատարմագրման գործընթացի ծրագրի մշակում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 7. | Կենդանական ծագում ունեցող սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների և էկոլոգիական աղտոտիչների առավելագույն քանակները սահմանող ՀՀ կառավարության չափորոշիչներին համապատասխան փորձաքննության անցկացում | 2010 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | Եվրամիության որակավորման չափանիշներին համապատասխան՝ մրցույթի տեխնիկական պահանջի մշակում, լաբորատորիայի ընտրություն և ընտրանքային սննդամթերքի լաբորատոր փորձաքննության արդյունքների մասին հաշվետվություններ ներկայացնելը |
| 8. | Եվրամիության փորձին համապատասխան՝ ռիսկերի գնահատման կենտրոնի ձևավորում՝<br><br>1) սննդային շղթայում առկա ռիսկերի գնահատման համար ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ձևավորում<br><br>2) անասնաբուժական ռիսկերի գնահատման համար իրավասու կենտրոնի ձևավորման հարցի քննարկում և առաջարկություն ներկայացնելը | 2010 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | սննդի անվտանգության իրավասու մարմնին օժանդակող կենտրոնի ձևավորման համար ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում<br><br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի կանոնադրության փոփոխություն և 2011 թվականից 20 մլն դրամ բազային ֆինանսավորման հատկացում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ